ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 19.12.2018թ. 01/24Մ գրության՝ տեղեկացվում է.

Բագրատունյաց փողոցի և Արտաշեսյան պողոտայի խաչմերուկի վերգետնյա հետիոտնային անցումը կառուցվել է Երևանի քաղաքապետարանի 2013 թվականի ծրագրերի շրջանակներում՝ «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության կողմից մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Նշված անցումը կառուցվել է Բագրատունյաց փողոցի և Արտաշեսյան պողոտայի խաչմերուկի խիստ ծանրաբեռնվածության պատճառով՝ քաղաքացիների տեղաշարժի անվտանգությունն ապահովելու նպատակով: Մինչև վերգետնյա անցումի կառուցումը, Երևանի քաղաքապետարանում կայացել են հանրային քննարկումներ, որի ժամանակ բնակիչների հետ ձեռքբերված պայմանավորվածության արդյունքում՝ բնակիչների մեծամասնությունը տվել է իր համաձայնությունը: Ձեռքբերված պայմանավորվածությունները եղել են բանավոր բնույթի և Երևանի քաղաքապետարանում գրավոր համաձայնագրեր կամ համապատասխան փաստաթղթեր առկա չեն: Բագրատունյաց փողոցի և Արտաշեսյան պողոտայի խաչմերուկի վերգետնյա հետիոտնային անցումն ապամոնտաժելու և Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի հարակից հատվածում կառուցելու առաջարկը ծախսատար է, քանի որ անհրաժեշտություն կառաջանա նաև ապամոնտաժելու նշված տարածքում գործող տաղավարները:

Ինչ վերաբերում է վնասի հատուցմանը, տեղեկացվում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 96-րդ հոդվածով սահմանված է վնասի հատուցման նախապայման, այն է՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ